

լեն և ամեն մէկը զձեղ կը կոչէ , ինձ  
մօտ եկէք , ես եմ քրիստոս , բայց  
դժու կացէք , ըստաբուիք , ես չեմ :

(Հարութեակիրակիւն)

## Ա Զ Դ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն

Թէկ քանի մի անգամ Ախօնի մի  
ջոցաւ սղդարարութիւն եղած է , որ  
առանց վկայագրի և կանխապէս ի-  
մացընելու ։ Եթուցաւ , մանուկներ  
ը զրկուին հեռաւոր քաղաքներէն  
Ժառանգաւորաց վարժարանի անո-  
ւամբ , բայց տակաւին կը շարունա-  
կուի սոյն ապօրինաւորութիւնը , եւ  
վարժարանի վարչութիւնը կըստիպ  
սւիյետ դարձընել եկած մանուկնե-  
րը , շատ անգամ բանագատուելով  
ճանապարհի ծախք ևս վճարել : Ուս-  
տի ներկայ ազդարարութեամբ յատ-  
կապէս կը ծանուցուի մեր սիրելի աղ-  
գայնոց , որ զգուշանան սոյնօրինակ  
անտեղութիւններէ : Վասն զի վար-  
ժարանի վարչութիւնը , ցարդ եղած  
ապօրինաւորութենէն տաղտկացած ,  
որոշած է այսուհետեւ , ՚ի պահան-  
ջել հարկին Ժառանգաւորաց թիւը  
լրացնելու համար , ինքնին քննել  
և ընտրել ուխտաւոր մանուկներէն  
այնպիսիները , որոնո աւելի առողջա-  
կազմ , յաջողակ և ընդունակ են ուս  
ման համար : Փորձով համոզուած  
եկք , որ այս եղանակը աւելի արդիւ-

նաւոր է քանի թէ այլաց ընտրութեն  
փառահերթ աշակերտ ընդունիլ վար-  
ժարանի մէջ :

## Ժ Ը Մ Ե Ա Կ Ե Գ Ր Ա Կ Ե Ր

— Ինչպէս որ Ախօնի Հունուար տմ-  
աթերթով յացոնած էինք , տեղւոյս  
նորընտիր կառավարիչ Վահեմ . Ըլի  
Փաշացն քաղաքս ժամանեց , բաւա-  
կան փափախութիւններ ըրաւ վարչա-  
կան պաշտօնէից մէջ և սկսաւ շարու-  
նակել իւր կառավարութիւնը . Տե-  
ղական հասարակութիւնը խիստ գո-  
հութեամբ կը նայի Վահեմ . Փաշացի  
նորոգ սնօրէնութեանց վրայ և մեծ  
բարիքներու կ'ակնկալէ նորա պաշ-  
տօնէութենէն :

— Տերութեան կողմէն եկած հբ-  
րահանգին համեմատ տեղւոյս Հայ-  
ոց հասարակութիւնը քուեարկու-  
թեամբ թաղական խորհրդաց անդա-  
մեկը ընտրեց հետեւեալ հայազգի  
Ուն . անձինքը՝ Պօղոս է. ֆէնտի թու-  
մայեսն , Պ. Արայիկոն Վուրատեան ,  
Պ. Հայրապետ Աւալանեան , Պ.  
Յովհաննէս Եւետիսեան , և Վքոսար  
որոշեց Պ. Դաւիթ Պետրոսեանը :  
Սոյն հասուն և օրինաւոր ընտրու-  
թիւնը յոյս կուտայ մեղ , որ այսու-  
հետեւ Հայոց Հասարակութեան  
գործքերը կը սնօրինուին ըստ պատ-  
շաճի և ըստ արդարութեան :

— Ա . Տեղեաց Խնդրոյն շարունա-  
կութիւնը կը հրատարակուի Ամա-  
դրոց յաջորդ թուալ :